

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱՔՆՆԻՉ ԶՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան)

Նախագահող դատավոր
դատական նիստերի քարտուղար
դատախազ
ամբաստանյալ
պաշտպան
Վ.Ռշտունի
Ռ.Դավոյան
Կ.Բարսեղյան
Ա.Ալեքսանյան
Ա.Չաքարյան

<<28>> հունիսի 2017թ. ք.Երևան
քննության առնելով մեղադրյալ Արմեն Համլետի Ալեքսանյանի (ծնված՝ 1982 թվականի մարտի 5-ին ՀՀ-ում, ազգությամբ՝ հայ, ՀՀ քաղաքացի, չի աշխատում, չամուսնացած, միջնակարգ կրթությամբ, նախկինում՝ դատապարտված, դատվաժողությունը չմարված, բնակվում է Երևան քաղաքի Գաջեգործների 40 շենքի 15-րդ բնակարանում) վերաբերյալ Երևան քաղաքի Արաբկիր և Զանաքեռ-Չեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ նաև դատարան) 2017 թվականի հունիսի 7-ի որոշման դեմ Արմեն Ալեքսանյանի պաշտպան Արա Չաքարյանի վերաքննիչ բողոքը՝
ՊԱՐՉԵՑ

Գործի դատավարական նախապատմությունը.
2014 թվականի մարտի 22-ին Արմեն Ալեքսանյանը ձերբակալվել է:
2014 թվականի մարտի 25-ի որոշմամբ թիվ 14123814 քրեական գործով Արմեն Ալեքսանյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-ին և 34-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-ին կետերով:
2014 թվականի դեկտեմբերի 4-ին Արաբկիր և Զանաքեռ-Չեյթուն վարչական շրջանների դատախազության դատախազ Կ.Բարսեղյանի որոշմամբ թիվ 14123814 քրեական գործով մեղադրական եզրակացությունը հաստատվել և գործն ուղարկվել է դատարան՝ ըստ էության քննելու:
Երևան քաղաքի Արաբկիր և Զանաքեռ-Չեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2014 թվականի դեկտեմբերի 8-ի որոշմամբ թիվ 14123814 քրեական գործն ընդունվել է վարույթ:
Երևան քաղաքի Արաբկիր և Զանաքեռ-Չեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2016 թվականի ապրիլի 26-ի որոշմամբ թիվ ԵԱԶԵՂ/0189/01/14 քրեական գործը վերստին ընդունվել է վարույթ:
Երևան քաղաքի Արաբկիր և Զանաքեռ-Չեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2017 թվականի հունիսի 7-ի որոշմամբ ամբաստանյալ Արմեն Ալեքսանյանի նկատմամբ կիրառված խափանման միջոց կալանավորումը վերացնելու կամ այլ խափանման միջոցով փոխարինելու, գրավի կիրառումը թույլատրելի ճանաչելու վերաբերյալ պաշտպան Արա Չաքարյանի միջնորդությունը մերժվել է:
Երևան քաղաքի Արաբկիր և Զանաքեռ-Չեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2017 թվականի հունիսի 28-ի որոշմամբ ամբաստանյալ Արմեն Ալեքսանյանի պաշտպան Արա Չաքարյանի միջնորդությունը բավարարվել և Երևան քաղաքի Արաբկիր և Զանաքեռ-Չեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2017 թվականի հունիսի 7-ի որոշման դեմ բողոք բերելու բաց թողնված ժամկետը վերականգնվել է:
2017 թվականի հունիսի 22-ին Վերաքննիչ դատարան է ստացվել ամբաստանյալ Արմեն Ալեքսանյանի պաշտպան Արա Չաքարյանի վերաքննիչ բողոքը, իսկ վերաքննիչ բողոքի վերաբերյալ նյութերը ստացվել են 2017 թվականի հունիսի 13-ին:
Վերաքննիչ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.
Ամբաստանյալ Արմեն Ալեքսանյանի պաշտպան Արա Չաքարյանը վերաքննիչ բողոքում նշել է, որ դատարանը չի պատճառաբանել, թե ինչ ապացույցների գնահատմամբ է հանգել հետևության, որ Արմեն Ալեքսանյանը առնչություն ունի իրեն մեղսագրվող արարքներին: Դատարանը չի վերլուծել հիմնավոր կասկածի բացակայության վերաբերյալ պաշտպանական կողմի փաստարկները և չի պատճառաբանել դրանց անհիմն լինելը, հետևաբար դատական ակտում բացակայում է պատճառաբանական մասը:
Ամբաստանյալ Արմեն Ալեքսանյանի ոչ պատշաճ վարքագծի վերաբերյալ հետևությունների հիմքում դատարանն

անթույլատրելիորեն դրել է բացառապես վերջինին մեղսագրվող արարքի բնույթն ու վտանագավորության աստիճանը, այն դեպքում, երբ նման մտավախությունները պետք է հիմնված լինեն գործի նյութերի վրա: Դատարանը հաշվի չի առել նաև ամբաստանյալի կալանքի տակ գտնվելու ժամկետը և չի բերել որևէ տրամաբանական փաստարկ, թե ինչու գրավի կիրառումը չի կարող զերծ պահել Արմեն Ալեքսանյանին թաքնվելուց: Հարցաքննված և դեռ չհարցաքննված անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու եղանակով քննությանը խոչընդոտելու դատարանի հետևությունները, ոչ միայն ակնհայտորեն հակասում են գործի նյութերին, այլև տեսականորեն անիրականալի են, քանի որ դատակոչի ցուցակում ընդգրկված անձանցից միայն տուժող Տալիտա Մանսուրյանի ցուցմունքն է վերաբերելի Արմեն Ալեքսանյանին, սակայն վերջինն ամբաստանյալի դեմ ցուցմունքներ փաստացի չի տվել, որի հետևանքով նախաքննության ընթացքում տուժողի և Արմեն Ալեքսանյանի միջև առերեսում չի կատարվել: Բացի այդ, շուրջ երկուս ու կես տարի տևող դատավարության ընթացքում տուժողը ոչ մի դատական նիստի չի ներկայացել և ըստ դատարանի ստացած տեղեկությունների՝ վերջինը բացակայում է ՀՀ-ից: Նման պայմաններում առնվազն տարօրինակ է դատարանի մտավախությունը, որ ազատության մեջ գտնվելու դեպքում Արմեն Ալեքսանյանը կարող է ազդել տուժողի վրա: Դատարանն այս առթիվ չի բերել որևէ փաստարկ, թե ինչպես կարող է ամբաստանյալը տուժողի հետ կապի մեջ մտնել, եթե վերջինի գտնվելու մասին որևէ տեղեկություն չկա:

Դատարանն ուշադրության չի արժանացրել, որ տուժողն իր ցուցմունքներով հերքել է 2014 թվականի մարտի 22-ին իր բնակարան մուտք գործելու փորձը, այսինքն՝ կասկածի տակ է դրել մեղադրանքի հիմնավորվածությունը: Այլ կերպ՝ տուժողի ցուցմունքը պաշտպանական կողմի ապացույց է, որի պայմաններում ողջամտորեն բացակայում է նրա վրա ներազդելու դատարանի վերացական մտավախությունը: Ինչ վերաբերում է այլ անձանց վրա ներազդելու մտավախությանը, ապա անտրամաբանական է, որ ամբաստանյալը կարող է ազդել այն անձանց վրա, ովքեր իր դեմ ցուցմունքներ չեն տվել: Հետևաբար՝ ոչ պատշաճ վարքագիծ դրսևորելու վերաբերյալ դատարանի հետևությունները տեղին չեն:

Դատարանը չի անդրադարձել նաև գործը առանձնահատուկ ջանասիրությամբ չքննելու մասին փաստարկներին: Նշված քրեական գործը քննվում է երկուս ու կես տարի, սակայն այդ ընթացքում հնարավոր է եղել հարցաքննել միայն չորս տուժողներից երեքին և երկու վկայի, այն դեպքում, երբ տվյալ քրեական գործը իրենից բարդություն չի ներկայացնում. այն բաղկացած է երեք հատորից, իսկ դատակոչի ցուցակում ընդգրկված են չորս տուժող, հինգ վկա և երկու ամբաստանյալ:

Ելնելով վերոգրյալից՝ բողոքաբերը խնդրել է բեկանել Երևան քաղաքի Արաբկիր և Զանաբեռ-Չեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2017 թվականի հունիսի 7-ի որոշումը և Արմեն Ալեքսանյանին ազատել կալանքից:

Վերաքննիչ դատարան ներկայացված նյութերը և կողմերի պարզաբանումները.

Վերաքննիչ դատարան է ներկայացվել քրեական գործը վարույթ ընդունելու մասին որոշման, քրեական գործը դատական քննության նշանակելու մասին որոշման, մեղադրական եզրակացության, միջնորդությունների պատճենները, կալանավորումը վերացնելու կամ այլ խափանման միջոցով փոխարինելու, կալանաանվորումը գրավով փոխարինելու վերաբերյալ միջնորդությունը քննության առնելու մասին որոշումը, բաց թողնված ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդությունը քննության առնելու մասին որոշումը:

Պաշտպան Արա Չաքարյանը վերոնշյալ հիմնավորումներով ներկայացրեց վերաքննիչ բողոքը՝ խնդրելով այն բավարարել: Պաշտպանը նաև հայտնեց, որ եթե Վերաքննիչ դատարանը գտնի, որ կալանավորման հիմքերն առկա են, ապա կալանավորումը գրավով փոխարինելը ճանաչի թույլատրելի և որպես գրավ ընդունի Շուշանիկ Արարատի Ալեքսանյանին սեփականության իրավունքով պատկանող Երևան քաղաքի Էրեբունի Անդրֆեդերացիայի փողոցի 2-րդ նրբանցք 110/1 հասցեում գտնվող անշարժ գույքը կամ մինչև 2.000.000 ՀՀ դրամ:

Դատախազ Կ.Բարսեղյանն առարկեց վերաքննիչ բողոքի դեմ և խնդրեց այն մերժել: Դատախազը մասնավորապես նշեց, որ չհարցաքննված տուժողը պարբերաբար բացակայում է ՀՀ-ից, վկաների մի մասը չի հարցաքննվել, ուստի մտավախություն կա, որ ամբաստանյալը կարող է անօրինական ազդեցություն գործադրել վերջինների վրա, իսկ դատական քննության ձգձգումները մասամբ պայմանավորված են նաև պաշտպանական կողմի կողմից միջնորդություններ ներկայացնելու հանգամանքով:

Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 385-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում: Վերաքննիչ դատարանը, ուսումնասիրելով ներկայացված բողոքը և ներկայացված նյութերը, գտնում է, որ ամբաստանյալ Արմեն Ալեքսանյանի պաշտպան Արա Չաքարյանի վերաքննիչ բողոքը ենթակա է բավարարման մասնակի հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ վճռաբեկ դատարանը 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ ԵԿԴ/0678/06/10 որոշմամբ դիրքորոշում է հայտնել այն մասին, որ ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 4-րդ կետի, Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի <<զ>> ենթակետի և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 107-րդ հոդվածի վերլուծությունից հետևում է, որ անձի կալանավորումը կհամարվի օրինական և հիմնավորված միայն այն դեպքում, երբ հաստատվի անձի առնչությունն իրեն մեղսագրվող հանցագործությանը (հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկածը) և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված հիմքերից որևէ մեկի կամ մի քանիսի առկայությունը:

ՀՀ վճարելի դատարանն իր մեկ այլ՝ թիվ ԱՎԴ/0022/06/08 գործով, 2008 թվականի հոկտեմբերի 31-ի որոշմամբ կալանքի ժամկետի երկարացման վերաբերյալ օրենսդրական և նախադեպային կանոնակարգման համադրման և մեկնաբանման հիման վրա՝ գտել է, որ մեղադրյալին կալանքի տակ պահելու ժամկետը կարող է երկարացվել հետևյալ երկու պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

ա) շարունակվում են առկա լինել կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու հիմքերն ու պայմանները կամ ի հայտ են եկել անձին կալանքի տակ պահելու նոր հիմքեր.

բ) գործի քննությունն իրականացնող մարմնի կողմից դրսևորվել է անհրաժեշտ ջանասիրություն՝ ապահովելու գործի քննության ընթացքը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 292-րդ հոդվածի և 293-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործն իր վարույթ ընդունած դատավորը հետագոտում է գործի նյութերը և քրեական գործը վարույթ ընդունելու պահից 15 օրվա ընթացքում կարող է որոշում կայացնել քրեական գործի վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին: Դատարանը որոշում է կայացնում դատական քննություն նշանակելու մասին, եթե քրեական գործի նյութերում բացակայում են վարույթը կարճելու հանգամանքները:

Տվյալ դեպքում անդրադառնալով բողոքաբերի այն պնդմանը, որ դատարանը չի պատճառաբանել, թե ինչ ապացույցների գնահատմամբ է հանգել այն հետևության, որ Արմեն Ալեքսանյանը առնչություն ունի իրեն մեղսագրվող արարքներին, ապա նկատի ունենալով, որ քրեական գործը գտնվում է դատական քննության փուլում, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ առաջին ատյանի դատարանը քրեական գործը վարույթ ընդունելիս քրեական գործի վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում չկայացնելով հաստատել է ամբաստանյալին մեղսագրվող արարքում հիմնավոր կասկածի առկայությունը: Ավելին, առաջին ատյանի դատարանը նաև միջնորդության քննության արդյունքում եկել է այն եզրահանգման, որ առկա են և պահպանվում են ենթադրյալ հանրորեն վտանգավոր արարքների կատարման ամբաստանյալ Արմեն Ալեքսանյանի առնչվելու վերաբերյալ հիմնավոր կասկածը հաստատող մեղադրական եզրակացությամբ վկայակոչված ապացույցների համակցություն: Հետևաբար բողոքաբերի պնդումներն այս առումով տեղին չեն:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը, դատախազը, քննիչը կամ հետաքննության մարմինը խափանման միջոց կարող են կիրառել միայն այն դեպքում, երբ քրեական գործով ձեռք բերված նյութերը բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ կասկածյալը կամ մեղադրյալը կարող է թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից, խոչընդոտել միջնորդական վարույթում կամ դատարանում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պատճառների չներկայանալու կամ այլ ճանապարհով կատարել քրեական օրենքով չթույլատրված արարք, խուսափել քրեական պատասխանատվությունից և նշանակված պատիժը կրելուց, խոչընդոտել դատարանի դատավճռի կատարմանը:

2013 թվականի փետրվարի 15-ի ՀՀ վճարելի դատարանի ԿԴ1/0062/06/12 մեկ այլ որոշմամբ նշվել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսդրությունը սահմանել է կալանավորման կիրառման օրինականությունն ու հիմնավորվածությունն ապահովող մի շարք երաշխիքներ, որոնց մեջ առաջին հերթին կարևորվում ու առանձնանում են կալանավորման հիմքերը: Դրանք օրենքով նախատեսված այն հանգամանքներն են, որոնք հաստատվում են ապացույցների որոշակի ամբողջությամբ և հնարավորություն են տալիս հիմնավորված ենթադրություններ անել այն մասին, որ անձը, կալանքի տակ չգտնվելով, կարող է դրսևորել ոչ պատշաճ վարքագիծ և խոչընդոտել քրեական դատավարության ինդիկների իրականացմանը: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածում թվարկված մեղադրյալի հավանական գործողությունների մասին հետևությունները պետք է հիմնված լինեն գործի նյութերից բխող ողջամիտ կասկածների կամ ենթադրությունների վրա: Դա նշանակում է, որ կալանավորման կիրառման հիմքում բոլոր դեպքերում պետք է դրվեն որոշ փաստական տվյալներ:

ՀՀ վճարելի դատարանը նշել է նաև, որ դատարանն անձի կալանավորման հարցը լուծելիս իրավասու է քննարկել դատաքննությանը մեղադրյալի ներկայանալը երաշխավորող այլընտրանքային միջոցների կիրառման հնարավորությունը, որպիսի միջոց է գրավը (տես ՀՀ վճարելի դատարանի 2008 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԱՎԴ/0022/06/08 որոշումը): Իսկ 2012 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ ԵԱԲԴ/0138/06/12 որոշմամբ նշել է, որ մեղադրյալի նկատմամբ կիրառված խափանման միջոց կալանավորումը գրավով փոխարինելու թույլատրելիության կամ անթույլատրելիության վերաբերյալ իր եզրահանգումները դատարանը պետք է հիմնավորի գործի նյութերում առկա փաստական տվյալներով: Անհրաժեշտ է կիրառել դատական ակտի պատճառաբանվածության առավել բարձր չափանիշ՝ կալանքը գրավով փոխարինելը մերժելու մասին դատարանի հետևությունները հիմնավորել գործի փաստական տվյալներով և ոչ թե բավարարվել ՀՀ քրեադատավարական օրենքով նախատեսված հիմքերի պարզ շարադրանքով:

Տվյալ դեպքում առաջին ատյանի դատարանը, հաշվի առնելով ամբաստանյալ Արմեն Ալեքսանյանին մեղսագրվող արարքների քանակը, բնույթն ու հանրային վտանգավորության աստիճանը, այն, որ վերջինին մեղսագրվում են ծանր հանցագործություններ, որոնց համար ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված է ազատազրկման ձևով պատիժ՝ չորսից ութ տարի ժամկետով, փաստել է, որ դեռևս բարձր են հավանական ռիսկերը, որ ամբաստանյալը, հայտնվելով ազատության մեջ, կարող է թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից, խոչընդոտել գործի դատաքննությանը՝ հարցաքննված և դեռևս չհարցաքննված անձանց իր օգտին ցուցմունքներ տալու և իր դեմ ցուցմունքներ չտալուն հարկադրելու՝ դատավարության մասնակիցների նկատմամբ անօրինական ազդեցություն գործադրելու ճանապարհով: Դատարանը գտել է, որ Արմեն Ալեքսանյանի նկատմամբ խափանման միջոցը վերացնելու, մեկ այլ խափանման միջոցով փոփոխելու, ինչպես նաև այլընտրանքային խափանման միջոց գրավ

կիրառելու նոր հիմքեր ի հայտ չեն եկել:

ՀՀ վճարելի դատարանը 2014 թվականի մարտի 28-ի թիվ ԵԷԴ/0138/06/13 որոշմամբ նշել է, որ մեղադրյալին վերագրվող արարքի բնույթը և վտանգավորության աստիճանը թեև չեն կարող գնահատվել որպես կալանավորման հիմնավորվածությունը հաստատելու ինքնուրույն հիմք, այնուամենայնիվ դրանք Եական նշանակություն ունեն խափանման միջոցի տեսակն ընտրելիս: Մեղազրվող հանցանքի ծանրությունը և հետևաբար նաև ակնկալվող պատժի խստությունը հանդիսանում են քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու կամ գործի քննությանը խոչընդոտելու հավանականությունը գնահատելու կարևոր տարրեր և գործի նյութերից բխող մյուս հանգամանքների հետ միասին հնարավորություն են տալիս հիմնավորված ենթադրություններ անել անձի ազատության հիմնարար իրավունքը սահմանափակելու հիմքերի առկայության կամ բացակայության մասին: Նշվածի համատեքստում հաշվի առնելով Արմեն Ալեքսանյանին մեղազրվող ենթադրյալ արարքների քանակը, բնույթն ու հանրային վտանգավորության աստիճանը, նախատեսված պատժի խստությունը, ինչպես նաև նախկին դատվածությունները, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ մեծ է հավանականությունը, որ մեղադրյալ Արմեն Ալեքսանյանը, մնալով ազատության մեջ, կարող է թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից և խուսափել քրեական պատասխանատվությունից:

Ինչ վերաբերում է ամբաստանյալի կողմից դատավարության մասնակիցների վրա անօրինական ազդեցություն գործադրելուն, ապա՝ նկատի ունենալով, որ քննչական և դատավարական հիմնական գործողությունները կատարվել են, բացի Տալիտա Մանսուրյանից, մյուս տուժողները նախաքննության և դատաքննության ընթացքում տվել են ցուցմունքներ, այդ թվում՝ առերես, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ այս դեպքում մեղադրյալի կողմից գործի քննությանը խոչընդոտելու վտանգի առկայությունն Եականորեն նվազել է:

Վերաքննիչ դատարանի համար հատկապես հատկանշական է, որ ամբաստանյալ Արմեն Ալեքսանյանը տվյալ գործով 3 տարի 4 ամսից ավել գտնվում է արգելանքի տակ և դեռևս պարզ չէ, թե նրա մասով երբ կկայացվի վերջնական դատական ակտ, այն պայմաններում, երբ նրան մեղազրված է 2 դրվագ հանցափորձ, որոնց համար նախատեսված է պատիժ չորսից ութ տարի ժամկետով: Սատացվում է, որ ամբաստանյալի նկատմամբ ժամանակին նույնիսկ մեղադրական դատավճիռ կայացնելու և նույնիսկ 6 տարի ժամկետով ազատազրկում նշանակելու դեպքում, նա արդեն կօգտվեր պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատվելու հնարավորությունից: Իսկ տվյալ դեպքում ստեղծվում է մի իրավիճակ, երբ անձը կարող է գրկվել քրեական իրավունքի առանձին ինստիտուտներ իր նկատմամբ կիրառելու հնարավորությունից: Ուստի, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ դատարանները յուրաքանչյուր դեպքում անձին անազատության մեջ պահելու հարցը քննարկելիս պետք է ուշադրություն դարձնեն նաև այս հանգամանքին:

Հարկ է նկատել նաև, որ ինչպես գործի քննության ժամկետները, այնպես էլ նախնական կալանքի տակ պահելու ժամկետները նույնպես պետք է լինեն ողջամիտ, ինչին հատուկ ուշադրություն է դարձնում նաև Մարդու իրավունքների Եվրոպական դատարանը: Մասնավորապես՝ Եվրոպական դատարանի 1996 դեկտեմբերի 18-ի (Scott v. Spain) որոշման իմաստային վերլուծությունից պարզ է դառնում, որ նախնական կալանքի տակ պահելու ողջամտությունը յուրաքանչյուր դեպքում պետք է գնահատվի՝ ելնելով կոնկրետ գործի հանգամանքներից: Անազատության մեջ պահելը կարող է լինել արդարացված, միայն, եթե կան ուղղակի ցուցումներ հանրային շահի առկայության մասին, որը, անմեղության կանխավարկածն անտեսելով, առավել է անձնական ազատության հարգանքի նկատմամբ: Առաջին հերթին դատարանների վրա դրվում է պարտականություն՝ քննության առնելու բոլոր հանգամանքները, որպիսիք թույլ են տալիս հաստատել այնպիսի շահի առկայությունը, որն արդարացնում է անձի ազատության մեջ թողնելու ընդհանուր նորմից բացառությունը: Անազատության մեջ գտնվող անձի կողմից իրավախախտման մասին հիմնավոր կասկածի առկայությունը պայման է հանդիսանում կալանքի տակ պահելու օրինականության համար, սակայն որոշակի ժամանակ անցնելու դեպքում միայն դա բավարար չէ և դրա համար անհրաժեշտ են լրացուցիչ ծանրակշիռ փաստարկներ:

Հատկանշական է, որ դատարան ներկայացված նյութերը և Վերաքննիչ դատարանում դատախազի կողմից բերված պարզաբանումները վկայում են, որ ամբաստանյալի երկարատև կալանավորումը պայմանավորված չէ վերջինի վարքագծով: Մասնավորապես՝ դատական քննության ընթացքում փոխվել է գործը քննող դատարանի կազմը, իսկ տուժողը բացակայում է ՀՀ-ից՝ անհնարին դարձնելով իր հարցաքննությունը:

Թեև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքն ուղղակիորեն չի նախատեսում առանց դատարանի թույլտվության իր գտնվելու նոր վայրի մասին նախապես տեղեկացնելու կամ այլ վայր չմեկնելու տուժողի պարտականություն, սակայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված են տուժողի պարտականությունները, մասնավորապես այն, որ տուժողը պարտավոր է ներկայանալ քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով, քրեական վարույթն իրականացնող մարմնի պահանջով տալ ցուցմունքներ: Իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 153-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նշանակված ժամկետում կանչով ներկայանալուն խոչընդոտող հարգելի պատճառների առկայության մասին տուժողը պարտավոր է տեղյակ պահել իրեն կանչած մարմնին: Այսպիսով՝ հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև, այն որ քրեական գործը դատարանի վարույթում է գտնվում 2014 թվականի դեկտեմբերի 8-ից, իսկ ամբաստանյալը կալանավորված է 3 տարի 4 ամսից ավել՝ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում առկա չէ այնպիսի շահ, որն արդարացնում է Արմեն Ալեքսանյանին տևական ժամանակ անազատության մեջ պահելը, ուստի տվյալ փուլում առաջին ատյանի

դատարանը միջնորդության քննարկման ժամանակ բավարար տվյալներ ունեցել է եզրահանգելու, որ գրավի կիրառումը կարող է ապահովել ամբաստանյալի պատշաճ վարքագիծը: Միաժամանակ անդրադառնալով գրավի գումարի չափի հարցին՝ Վերաքննիչ դատարանը, հաշվի առնելով ամբաստանյալի անձը, մեղսագրվող արարքների վտանգավորության աստիճանը և վերը քննարկված այլ հանգամանքները, գտնում է, որ 2.000.000 ՀՀ դրամ գրավի գումարի վճարման երաշխիքը կարող է ապահովել մեղադրյալի պատշաճ վարքագիծը, ուստի մեղադրյալին գրավով կալանքից ազատ արձակելը թույլատրելի է:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-137-րդ, 288-րդ, 387-րդ, 394-րդ և 412-րդ հոդվածներով՝ Վերաքննիչ դատարանը
ՈՐՈՇԵՑ

Ամբաստանյալ Արմեն Ալեքսանյանի պաշտպան Արա Չաքարյանի վերաքննիչ բողոքը բավարարել մասնակի: Երևան քաղաքի Արաբկիր և Զանաքեռ-Չեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2017 թվականի հունիսի 7-ի որոշումը՝ գրավն անթույլատրելի ճանաչելու մասով, բեկանել և փոփոխել՝ Արմեն Համլետի Ալեքսանյանի նկատմամբ կիրառելով գրավ՝ նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկի (2.000.000 ՀՀ դրամ) չափով:

Գրավի գումարը ենթակա է վճարման ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի արտաբյուջետային թիվ 900023292015 դեպոզիտ հաշվին:

Որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վճռաբեկ դատարան՝ ստանալու պահից տասնհինգօրյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ Վ.ՌՇՏՈՒՆԻ